



HOKEHANKISD



NORA JARIAN
GARBIS JARIAN

(2nd Anniversary)
(10th Anniversary)

Requested by: Der Hayr and Board of Trustees
Hrair & Ani Jarian and Family
Raffi & Maria Jarian and Family
Samig & Varteni Jarian and Family
Loucin Terzian & Family
Arpi Lakhoyan & Family
Zabel Sabounjian & Family

NAZARET SARKISSIAN

(3rd Anniversary)

Requested by: Der Hayr and Board of Trustees
Varteni & Samig Jarian and Family
Ekhsapet Sarkissian




2024 FEASTS

- June 15 Discovery of St. Gregory the Illuminator's Relics
- June 20 Saint Sahak and Saint Mesrob
- June 22 King Tirdat, Queen Ashkhen and Khosrovidoukht
- July 7 Feast of the Transfiguration
- July 13 Saint Thaddeus and Saint Sandoukht
- August 18 Assumption of the Holy Mother of God
- September 15 Exaltation of the Holy Cross
- September 28 Saint Kevork (George)
- September 29 Holy Cross of Varak
- October 12 Holy Translators
- October 27 Discovery of the Cross
- November 2 Feast of All Saints
- November 9 Holy Archangels Gabriel & Michael
- November 30 Saint Thaddeus and Saint Bartholomew
- December 14 Saint Hagop (James) of Nisibis
- December 23 Saints David the Prophet & Holy Apostle James
- December 24 Saint Stephen the Protomartyr
- December 26 Saints Peter and Saint Paul
- December 28 The Holy Apostle James & John the Evangelist

Ս. ԽԱՉ ՀԱՅՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ SOORP KHATCH ARMENIAN APOSTOLIC CHURCH

☞ SUNDAY, JUNE 16, 2024 ☜



ՉԱՅՆ ԳԿ

ՀՈԳԵԳԱԼՈՒՄԵՆ ԵՏՔ Դ. ԿԻՐԱԿԻ
FOURTH SUNDAY AFTER PENTECOST

Ս. Պատարագ Առ. Ժամը 10:30-ին հեռարձակում
Divine Liturgy 10:30 a.m. Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church
4906 Flint Drive, Bethesda, MD 20816
Office Hours: 10:00 a.m-2:00 p.m.
Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393
E-mail: soorpkhatch@verizon.net
Web Page: www.soorpkhatch.org
Archpriest Fr. Sarkis Aktavoukian, Pastor
Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

All Sick



Parishioners

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ**

----- (7.25 – 8.1) -----

Բայց շնորհակալութիւն կը յայտնեմ Աստուծոյ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

Ապա ուրեմն, ես ինքս միտքով Աստուծոյ Օրէնքին կը ծառայեմ, իսկ մարմինով՝ մեղքի օրէնքին:

Եթէ այդպէս է, կը նշանակէ թէ անոնք որ Քրիստոս Յիսուսի միացած են, դատապարտութեան ենթակայ չեն, քանի մարմնաւորապէս չեն ապրիր, այլ՝ հոգեւորապէս: Որովհետեւ Հոգիին Օրէնքը զիս Քրիստոս Յիսուսի միացնելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան ենթակայութենէն: Արդարեւ, ինչ որ Օրէնքը չէր կրնար ընել, մարդկային բնութեան տկար ըլլալուն պատճառով, Աստուած իրագործեց՝ աշխարհ զրկելով իր Որդին, որ մեղքը յաղթահարելու համար մեր մեղանշական բնութիւնը իր վրայ առաւ եւ իր մարմինին մէջ դատապարտեց մեղքը, որպէսզի մենք, որ հոգեւորապէս կ'ապրինք եւ ո՛չ մարմնաւորապէս, կարենանք լրիւ գործադրել Օրէնքին բոլոր պահանջները: Անոնք որ միայն իրենց մարմնական պահանջներով կը ղեկավարուին, անոնց մտածելակերպը մարմնական է. մինչդեռ անոնք որ Հոգիին թելադրած ձեւով կ'ապրին, անոնց մտածելակերպը հոգեւոր է: Մարմնականը խորհիլը մահ կը պատճառէ, մինչ հոգեկանը խորհիլը՝ կեանք եւ խաղաղութիւն: Մարմնականին կառչած միտքը Աստուծոյ թշնամի է, որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն չի հնազանդիր, ո՛չ ալ կրնայ հնազանդիլ: Ահա թէ ինչու, անոնք որ մարմնականին կը հետեւին, Աստուծոյ հաճելի չեն կրնար ըլլալ:

Եթէ իրապէս Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, կը նշանակէ՝ թէ դուք այլեւս մարմնական ցանկութիւններուն համաձայն չէք ապրիր, այլ՝ Սուրբ Հոգիին կամեցած ձեւով: Իսկ ով որ Քրիստոսի Հոգին չունի, անոր չի պատկանիր: Եթէ Քրիստոս ձեր մէջն է, թէպէտեւ ձեր մարմինները պիտի մեռնին, որովհետեւ մեղանշեցիք, սակայն Սուրբ Հոգին դարձեալ կեանք պիտի տայ ձեզի, որովհետեւ արդարացաք: Այսինքն, եթէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, Աստուած՝ որ Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարուցանեց, իր Հոգիին միջոցաւ՝ որ ձեր մէջ կը բնակի, պիտի կենդանացնէ նաեւ ձեր մահկանացու մարմինները:

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

----- (12 . 38 -45) -----


Այն ատեն Օրէնքի ուսուցիչներէն եւ Փարիսեցիներէն ոմանք ըսին Յիսուսի.

– Վարդապե՛տ, կ'ուզենք որ հրաշք մը գործես եւ տեսնենք:

Յիսուս անոնց պատասխանեց.

– Աստուծոյ անհաւատարիմ եւ շար սերունդ, նշան մը կ'ուզէք, բայց Յովնան մարգարէին նշանէն զատ ուրիշ նշան պիտի չտրուի ձեզի: Ինչպէս Յովնան երեք օր ցերեկ ու գիշեր կէտ ձուկի փորին մէջ մնաց, նոյնպէս ալ Մարդու Որդին երեք օր, ցերեկ ու գիշեր, պիտի մնայ երկրի ընդերքին մէջ: Դատաստանի օրը Նինուէացիները ձեզի դէմ պիտի ելլեն եւ դատապարտեն ձեզ, որովհետեւ անոնք Յովնանի քարոզութեամբ զղջացին իրենց մեղքերուն համար: Եւ ահա, Յովնանէն աւելի մեծ մէկը կայ հոս: Դարձեալ, Դատաստանի օրը Հարաւի թագուհին պիտի ելլէ եւ դատապարտէ ձեզ, որովհետեւ անիկա իր հեռաւոր երկրէն եկաւ Սողոմոնի իմաստուն ուսուցումները լսելու հա-մար: Եւ ահա, Սողոմոնէն աւելի մեծ մէկը կայ հոս:

– Երբ շար ոգին դուրս կ'ելլէ մարդու մը մէջէն, կ'երթայ եւ անշրդի վայրեր կը շրջի՝ հանգիստ տեղ մը գտնելու համար: Եւ երբ չի գտներ, ինքնիրեն կ'ըսէ. «Ելլեմ երթամ իմ տունս, ուրկէ ելայ»: Ուստի կը վերադառնայ իր նախկին տունը եւ զայն կը գտնէ պարապ, մաքուր եւ յարգարուած: Ապա կ'երթայ եւ կը բերէ իրմէ աւելի շար եօթը այլ ոգիներ, որոնց հետ ներս մտնելով՝ կը բնակի հոն, որով այդ մարդուն վերջը իր նախկին վիճակէն աւելի գէշ կ'ըլլայ: Գիտցէ՛ք, որ նոյնը պիտի պատահի նաեւ այս շար սերունդին:



2023 & 2024 Membership Dues – Parishioners who have not paid their 2023 Annual Membership dues are encouraged to remit payment. 2024 Membership Dues are also accepted now. The membership fees are \$150.00 per adult and \$50.00 for each full time student ages 18-26. These dues are 100 percent tax deductible.

ROMANS 7:25 – 8:11

Thanks be to God, who delivers me through Jesus Christ our Lord!

So then, I myself in my mind am a slave to God’s law, but in my sinful nature[Ⓜ] a slave to the law of sin.

Therefore, there is now no condemnation for those who are in Christ Jesus, because through Christ Jesus the law of the Spirit who gives life has set you[Ⓜ] free from the law of sin and death. For what the law was powerless to do because it was weakened by the flesh,[Ⓜ] God did by sending his own Son in the likeness of sinful flesh to be a sin offering.[Ⓜ] And so he condemned sin in the flesh, in order that the righteous requirement of the law might be fully met in us, who do not live according to the flesh but according to the Spirit.

Those who live according to the flesh have their minds set on what the flesh desires; but those who live in accordance with the Spirit have their minds set on what the Spirit desires. The mind governed by the flesh is death, but the mind governed by the Spirit is life and peace. The mind governed by the flesh is hostile to God; it does not submit to God’s law, nor can it do so. Those who are in the realm of the flesh cannot please God.

You, however, are not in the realm of the flesh but are in the realm of the Spirit, if indeed the Spirit of God lives in you. And if anyone does not have the Spirit of Christ, they do not belong to Christ. But if Christ is in you, then even though your body is subject to death because of sin, the Spirit gives life because of righteousness. And if the Spirit of him who raised Jesus from the dead is living in you, he who raised Christ from the dead will also give life to your mortal bodies because of[Ⓜ] his Spirit who lives in you.



Note: This Sunday a second plate will be passed around for the Saint Nerses Seminary in Armenia where 140 youths will be participating this summer.



SCRIPTURE READINGS



MATTHEW 12:38-45

Then some of the Pharisees and teachers of the law said to him, “Teacher, we want to see a sign from you.”

He answered, “A wicked and adulterous generation asks for a sign! But none will be given it except the sign of the prophet Jonah. For as Jonah was three days and three nights in the belly of a huge fish, so the Son of Man will be three days and three nights in the heart of the earth. The men of Nineveh will stand up at the judgment with this generation and condemn it; for they repented at the preaching of Jonah, and now something greater than Jonah is here. The Queen of the South will rise at the judgment with this generation and condemn it; for she came from the ends of the earth to listen to Solomon’s wisdom, and now something greater than Solomon is here.

“When an impure spirit comes out of a person, it goes through arid places seeking rest and does not find it. Then it says, ‘I will return to the house I left.’ When it arrives, it finds the house unoccupied, swept clean and put in order. Then it goes and takes with it seven other spirits more wicked than itself, and they go in and live there. And the final condition of that person is worse than the first. That is how it will be with this wicked generation.”



Այս տարի հոգեհանգիստ կարելի չէ կատարել հետեւալ տաղաւար տօներուն.

- *Կիրակի, Յուլիս 7.....Այլակերպութիւն Քրիստոսի*
- *Կիրակի, Օգոստոս 18.....Սուրբ Աստուածածին*
- *Կիրակի, Սեպտեմբեր 15.....Խաչվերաց*

NO HOKEHANKISD SERVICES ON FEAST SUNDAYS:

- July 7.....Feast of the Transfiguration
- August 18.....Assumption of the Holy Mother of God
- September 15.....Exaltation of the Holy Cross

«ՄՇՈՅ ԶԱՌԸՆՏԻՐ»Ը

«Մշոյ ճառնտիր»ը հայ ժողովուրդի ամենամեծ մագաղաթեայ ձեռագիրն է, որ կը պահուի Երեւանի Մաշտոցի անուան մատենադարանին մէջ:

Մատենը, առանց իր կողքին, կը կշռէ աւելի քան 30 քիլոկրամ: Անոր ամէն մէկ էջը շինուած է մէկ հորթի կաշիէ:

Վարդան Կարնեցին երեք տարի աշխատած է այս մատենը ընդօրինակելու համար. իսկ էջերը զարդարած է Ստեփանոս Ծաղկողը:

Մատենը ունի շատ հետաքրքրական պատմութիւն, որ նման է հայ ժողովուրդի ճակատագրին:

1022-ին, սելճուք-թուրքերը կը գողնան մատենը եւ 4000 ոսկիի կը ծախեն հայ գիւղացիներուն: Գիւղացիները 700 տարի շարունակ, կը պահեն զայն Մուշի Սուրբ Առաքելոց վանքին մէջ:

Տեղահանութեան օրերուն, երկու հայ կիներ զայն կը գտնեն՝ Ս. Առաքելոց վանքի աւերակներուն տակ թաղուած: Անոնք մատենը երկու մասի կը բաժնեն եւ կը փախցնեն՝ փրկելու համար ոչնչացումէ:

Յայտնի չէ թէ ի՞նչ պատահած է այդ երկու հայուհիներուն. բայց յայտնի է, որ մատենին առաջին կէսը մատենադարան յանձնուելէ տարիներ ետք, երկրորդ կէսը կը յայտնաբերուի էրզրումի (Կարին) հայկական եկեղեցոյ բակէն ու կը բերուի Երեւանի Մաշտոցի անուան մատենադարան:

Այսպիսով, երկա՛ր թափառումներէ ետք, երկուորեակները կը միանան Հայրենիքի մէջ՝ գտնելով իրենց իսկական պատսպարանը:



Ինչպէս ազոխը ակռաները կը փոթոթեցնէ,
եւ ծուխը աչքերը կը կսկծացնէ, այնպէս ալ ծոյլը զինք
գործի առնողին սիրտը կը հատցնէ:
(Առակաց 10.26)

CHURCH MANNERS & ETIQUETTE

ENTRANCE

Your entrance into the Armenian Apostolic Church should be most reverent and solemn. One can make the sign of the cross as one enters.

LIGHTING OF CANDLES

One of the devotional practices of the Armenian Apostolic Church is the beautiful custom of lighting candles in front of the holy pictures. You may make the sign of the cross, say a short prayer and take your place. These candles may be obtained from the table as you enter church. It is customary to make a donation when you receive them.

SITTING AND STANDING ETIQUETTE

Sitting and standing at the proper time seems to be one of the most perplexing issues during the service. Instructions about the proper time to stand or sit are given in the Holy Divine Liturgy Book. Moreover, the light boxes instruct us about when to sit or stand.

THE KISS OF PEACE

Put your right hand on your heart, and then extend your head first over the right and then over the left shoulder of the person who is giving the greeting, saying **Kristos ee metch mer haydnet sav**" (Christ is revealed amongst us) then in turn, you greet the person nearest you saying, "Orhnyal eh haydnootyunun Krisdosee" (Blessed be the revelation of Christ)

LEAVING THE CHURCH

You should be as reverent and orderly as upon your entrance. Do not visit with friends until you are outside of church.